№ 229 Դեկտեմբերի 29 1879 Դեկտեմբերի 29 № 229

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարւանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

[illegible]

Հասցէ [illegible] Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

[illegible]

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողին 2 կոպէկ

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-ԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թուին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԷՆ ՕՐ, բացի տօն և տօների հետեւեալ օրերից։

Լրագրի գինը և պայմանները նոյն են մնում։ Մենք առաջարկում ենք ԱՌՓՍԿԱՆ ՀԱՒԱՏԱՐԻՄՆԵՐԻ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարւան 6 րուբլ։ Գրվել կարելի է ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

[illegible]

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Մեզ շատերը մեղադրում են, որ մենք մեր առաջնորդող յօդուածների մեծ մասը նուիրում ենք ընդհանուր խնդիրներին և շատ քիչ ենք խօսում Թիֆլիսի քաղաքային հարցերի մասին։

Խոստովանում ենք, մենք շատ անգամ խօսել ենք և քաղաքային գործերի վրա, բայց դրա համար էլ ընթերցողներ հարկաւոր են.... Իսկ Թիֆլիսեցի հայը հայերէն չէ կարդում և այդ պատճառով մեր քաղաքային վարչութիւնն էլ բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում այն մտքերի վրա, որոնք յայտնվում են հայոց լրագրութեան մէջ։

Երբ որ Դումայի անդամներից մինը, օրինակ պ. Ալիխանեան, յայտնում է այն միտքը, թէ պէտք է քաղաքիս հին թաղերը քանդել, վերանորոգել և նոր ու լայն փողոցներ ու բուլվարներ անցկացնել այդ նեղ ու անառողջ քաղաքամասում,—այդ մտքերին թէև շատերը հակառակում են, բայց այնու ամենայնիւ նրանց վրա ուշադրութիւն են դարձնում։

Բայց երբ մի քանի տարի առաջ մենք մեր լրագրի մէջ յայտնեցինք նոյն մտքերը և առաջարկեցինք բաժանորդական ընկերութիւններ կազմել քաղաքիս հին թաղերը քանդելու, նոր ամեր ու լայն փողոցներ շինելու համար,—ի հարկէ մեր քաղաքային վարչութիւնը ու մեր Դումայի անդամները բոլորովին ուշադրութիւն չը դարձրին այդ մեր յայտնած մտքերի վրա։

Դրանից յետոյ մենք շատ անգամ յայտնեցինք մեր կարծիքը Թիֆլիսի մի քանի փողոցները լայնացնելու անհրաժեշտութեան մասին, մանաւանդ այն փողոցների, որոնք ներկայացնում են մեր քաղաքում երթեւեկութեան գլխաւոր և ամենայաճախակի ճանապարհներ.... Ի հարկէ կրկին ոչ որ ուշադրութիւն չը դարձրեց մեր այդ առաջարկութեան վրա.... Ինչ հարկաւոր է քաղաքային փողոցներ ծախել այդ տեսակ դատարկ բանի վրա, մտածում են մեր քաղաքային ներկայացուցիչները....

Եւ ինչ այդ գործը, այսինքն փողոցների լայնացնելը, էկոնոմիական մեծ [illegible] թէ

[illegible]

ՖԵԼԻԵՏՕՆ

[illegible]

միայն քաղաքի խրատընդն է, բայց այդ նրա պարտաւորութիւնն է։

Մենք խօսում էինք գիւղացի փողոցների լայնացնելու անհրաժեշտութեան մասին, երթևեկութիւնը հեշտացնելու նպատակով։ Բայց մի ուրիշ, նոյնպէս կարևոր կէտ կայ, որ առիպում է մեզ այժմ կրկնել նոյն առաջարկութիւնը։

Վերջին ժամանակներս առատ յաճախ սկսել են կրկնուել թիփլիսում հրդեհներ։ Մեր հասարակ փայտութեան մեքենաները և այժմս շատ անպատրաստացել են ... յաճախ կրկնւող հրդեհների առաջն առնելու։

Դեռ քան է երբ որ մի տեղ է պատահում հրդեհ և այն էլ համեմատ եղանակի ժամանակ։

Բայց ինչ կը լինէր եթէ յանկարծ երկու երեք տեղ միաժամանակ յայտնուէին հրդեհներ, ինչպէս այդ սովորական պատահում է մեծ քաղաքներում... Ինչ կարող էր այն ժամանակ անել մեր հասարակ փայտութիւնը որ ընդամենը բաղկացած է, կարծեմ քանի մարդուց, տասը ձիաներից և տասը տակառներից...

Բայց եթէ, Աստուած չանի, մեր քաղաքի հին թաղերից մեկի մէջ, ուր փողոցները այնքան նեղ են, որ հազիւ երկու ֆաէտոն կարող են անցնել, յայտնուէր հրդեհ քամու ժամանակ, — այն ժամանակ մի գիշերւայ մէջ ... քաղաքի կէսը կարող էր այրուել։

Այս թէ ինչ է սպասում մեզ մի անգամ, եթէ որ առաջ չը մտածենք մեր քաղաքի հին թաղերի օգտիի անկար ընդհանուր հաշւով (քաղաքի թէ բարեկարգութեան ընկերութեան) առնել, նրանց քանդել, հին և նեղ փողոցների տեղ նոր և լայն փողոցներ գծագրել, ամեն տեղ ջուր անցկացնել և հին տների տեղ նորեր շինել։

Եթէ, Աստուած չանի, մի անգամ մի մեծ դժբաղդութիւն կը պատահի, — այն ժամանակ այդ դժբաղդութեան համար պատասխանատու կը լինի ժողովրդի առաջ մեր քաղաքային վարչութիւնը իր քաղաքագլխով, իր Դումայով և Դումայի բոլոր խմբով անդամներով։

Բայց և հասարակութեան ինտելիգենտ մասն էլ, որ խօսել էր մեծ արդարութեան ձայնին, նոյնպէս պատասխանատու կը լինի պատահած դժբաղդութեան համար։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

[illegible]

3 դեկտեմբերի

[illegible]